



ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն



Implemented by

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



ՀՀ պետական
կառավարման
ակադեմիա

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՈԴՈՒԼ 4. Համայնքի ֆինանսական կառավարում



ԹԵՄԱՆԵՐԸ

ԹԵՄԱ 1.

Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպումը և համայնքի բյուջեի կառավարումը

ԹԵՄԱ 3.

Համայնքի բյուջեի նախագծի մշակման, քննարկման և հաստատման կարգը

ԹԵՄԱ 2.

Համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները, համայնքի բյուջեին ներկայացվող պահանջները և բյուջեի նախագծի կառուցվածքը

ԹԵՄԱ 4.

Համայնքի բյուջետային գործընթացներում համայնքի ավագանու վերահսկողական բնույթի լիազորությունները

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի հնգամյա
զարգացման ծրագիրը

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը

Համայնքի միջնաժամկետ
ծախսերի ծրագիրը

Համայնքի ծախսային ռազմավարությունն է երեք տարվա համար

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի բյուջե	Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը
Բյուջետային գործընթացը	Ցուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունները հաստատելու ուղղությամբ պետական կառավարման և ՏԻՄ-երի օրենքով կանոնակարգված գործունեությունն է

«Բյուջե» հասկացությունը

Բյուջեն պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ-երին) Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի **ֆինանսական ծրագիր է**

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը պետական և համայնքային բյուջեների ամբողջությունն է, որոնք հիմնվում են **ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա:**




Համայնքի բյուջեն դրամական մուտքերի և ելքերի այն
ամբողջությունն է, որը **տնօրինվում է** տեղական
ինքնակառավարման մարմինների կողմից՝ սոցիալ-տնտեսական
զարգացման ծրագրերի ֆինանսավորման և համայնքային
նշանակության խնդիրները լուծելու նպատակով:

**Համայնքային բյուջեների ձևավորման և օգտագործման
արդյունավետության բարձրացումը կարելի է համարել
ՏԻՄ-երի առաջնային հիմնախնդիրներից մեկը, քանի որ
դրանից կախված է ՏԻՄ-երի գործունեության
արդյունավետությունը, նրանց կողմից լիազորությունների
իրականացման մակարդակը:**

Համայնքի բյուջեի ձևավորման սկզբունքները.

Ըստ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի՝


- ✓ ՀՀԶԾ-ի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը,
- ✓ պահուստային ֆոնդի ստեղծումը,
- ✓ համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը,
- ✓ խնայողականությունը,
- ✓ արդյունավետությունը,
- ✓ հավաստիությունը և հստակությունը,
- ✓ հրապարակայնությունը:



ԹԵՄԱ 1.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները **կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու,** դրանց տարեկան հաշվետվությունները **հաստատելու** ուղղությամբ պետական կառավարման և ՏԻՄ-երի օրենքով կանոնակարգված գործունեությունն է:



Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը

սկսվում է ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա

բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման

օրը և ավարտվում՝ տվյալ տարվա բյուջենների կատարման

վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու օրը:

Բյուջետային գործընթացը ենթադրում է՝

- Բյուջետային գործընթացում շահագրգիռ բոլոր կողմերի (դերակատարների) ակտիվ ներգրավում,
- Բյուջեների մշակում, հաստատում և կատարում ՀՀ օրենքով ու նորմատիվ ակտերով սահմանված կարգով ու ժամկետներում,
- Համայնքի բյուջեի կազմում բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջեների դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա,
- Ֆինանսական միջոցների պլանավորում ՀՀԶԾ-ի հիման վրա,
- Բյուջետային գործընթացի հիմնական փուլերի պարտադիր պահպանում,
- Բյուջետային գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

Բյուջետային գործընթացի կազմակերպումը

Բյուջեի մշակման գործընթացը պետք է լինի ծրագրավորված և կանոնակարգված, ինչը պահանջում է՝

- Գործընթացի կազմակերպման նախապատրաստում.
 - համայնքի ղեկավարի որոշումը (կարգադրությունը)
 - բյուջետային գործընթացը սկսելու մասին,
 - բյուջետային օրացույցի կազմում,
 - բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների որոշում,
 - մեթոդական ցուցումների մշակում,
 - բյուջետային ձևերի մշակում,

- Ակնկալվող եկամուտների աղբյուրների և ծավալների որոշում.
- Նախատեսվող ծախսերի հիմնական ուղղությունների ձևավորում.
- Բյուջեի քննարկումը որպես ֆինանսական հնարավորությունների և հայտերի համատեղելիության ստուգում.
- Բյուջեի վերջնական նախագծի կազմում.
- Բյուջեի հրապարակայնության ապահովում և հաստատում.
- Բյուջեի կատարում.
- Բյուջեի կատարման վերահսկում և գնահատում:

Բյուջետային գործընթացի ընդհանուր տևողությունը համայնքներում, որպես կանոն, չի գերազանցում 22 ամիսը:

Փուլ 1. Մշակում և հաստատում (6-7 ամիս)

Սկսվում է ֆինանսական տարվան նախորդող տարվա կեսերից: Կարիքների գնահատում, ՄԺԾԾ-ի կազմում, նախագծի մշակում:

Փուլ 2. Կատարում և վերահսկողություն (12 ամիս)

Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը:
Բյուջեի համաժամանակյա կատարում և ընթացիկ վերահսկողություն (եռամսյակային հաշվետվություններ):

Փուլ 3. Հաշվետվություն և աուդիտ (մինչև 3 ամիս)

Հաջորդում է տարվա ավարտին անմիջապես հետո: Ամփոփիչ հաշվետվության պատրաստում, աուդիտ և հաստատում մինչև մարտի 20-ը:



Լիազորությունների հավասարակշռություն. Համայնքի ղեկավար և Ավագանի

Արդյունավետ ինքնակառավարումը պահանջում է դերերի խիստ տարանջատում: Գործադիր իշխանությունը պլանավորում և իրականացնում է, ներկայացուցչականը՝ հաստատում և վերահսկում է:



Բյուջեի կատարման վերահսկման գործընթացը ներառում է՝

- ա) ֆինանսական և հաշվապահական
վերահսկողությունը,**
- բ) կառավարման գործառույթների պարբերական
վերլուծությունը և վերահսկողությունը,**
- գ) ծրագրերի կամ կատարված աշխատանքների
վերահսկողությունը և գնահատումը:**

Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու

եռամսյակին հաջորդող ամսվա տասնհինգը,

բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում է

ներկայացնում ավագանուն:

Բյուջետային գործընթացի նկատմամբ պետական լիազորված
մարմինն իրականացնում է
իրավական հսկողություն:

Համայնքի բյուջեի կատարման հետ կապված կարգավորումները
սահմանվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային
համակարգի մասին» ՀՀ օրենքով:

**ԹԵՄԱ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Համայնքի բյուջե



Եկամուտներ - Ծախսեր = Հավելուրդ (կամ Պակասուրդ)

Ուշադրություն. Պակասուրդի/հավելուրդի չափը սահմանվում է բացառապես Ավագանու որոշմամբ:

Համայնքի բյուջեի պակասուրդի գումարը չպետք է գերազանցի պակասուրդի ֆինանսավորման համար օրենքով սահմանված աղբյուրների ընդհանուր գումարը:

Բյուջետային տարվա համար համայնքի բյուջեի յուրաքանչյուր
(վարչական և ֆոնդային) մասով բյուջեն պետք է լինի
հավասարակշռված: Այսինքն համայնքը չի կարող հաստատել
«անբալանս» բյուջե, որտեղ արդեն սկզբից ծախսերը ավելի շատ են,
քան եկամուտները:

Սակայն բյուջեի կատարման ընթացքում կարող է առաջանալ
տարբերություն, օրինակ փաստացի ծախսերը կարող են
գերազանցել փաստացի եկամուտներին, այդ դեպքում առաջանում է
պակասուրդ, հակառակ դեպքում՝ հավելուրդ:

- ✓ Պահուստային ֆոնդերը կարող են օգտագործվել միայն համայնքի ավագանու որոշմամբ:
- ✓ Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կարող է նախատեսվել համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների 5-ից 30 տոկոսի չափով:
- ✓ Համայնքի բյուջեի ֆոնդային մասում կարող է ձևավորվել պահուստային ֆոնդ, որը չի կարող գերազանցել համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը:

- ✓ Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կարող են ֆինանսական միջոցներ ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:
- ✓ Համայնքի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից չեն կարող ֆինանսական միջոցներ ուղղվել համայնքի բյուջեի վարչական մաս:

Համայնքի վարչական բյուջեի մուտքերը

Հարկային
եկամուտներ

Պետական և
տեղական
տուրքեր

Ընթացիկ
դրամա-
շնորհներ

Այլ
եկամուտներ

Դեֆիցիտի
ֆինանսավորման
աղբյուրներ



Հարկային եկամուտներ

Տեսակարար կշիռները
2024թ. դրությամբ

Գույքային հարկ՝ անշարժ գույքից
(7,5%)

Գույքային հարկ՝
փոխադրամիջոցներից (8,8%)

Բնապահպանական վճարներից և
ռոյալթիներից մասհանումներ (0%)

Եկամտահարկից և
շահութահարկից մասհանումներ
(0%)

Տեղական տուրքեր (24 տեղական տուրք)

Տեսակարար կշիռները 2024թ. դրությամբ

Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների շինարարության և քանդման թույլտվություններ (5,9%)

Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություններ (0,5%)

Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ (0,4%)

Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություններ (0,1%)

Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն (0,1%)

Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար (0,1%)

Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվություններ (0,1%) **և
այլ տուրքեր**

Պետական տուրքեր

Տեսակարար կշիռները 2024թ. դրությամբ

Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար **(0,4%)**

Տեսակարար կշիռները 2024թ. դրությամբ

Ընթացիկ դրամաշնորհներ

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ **(39%)**

Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից **(0,26%)**

Այլ դոտացիաներ **(1,7%)**

Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) **(0,1%)**

Այլ եկամուտներ (ոչ հարկային եկամուտներ)

Տեսակարար կշիռները 2024թ. դրությամբ

Պատվիրակված լիազորությունների
իրականացման դիմաց պետ. բյուջեից ստացված
միջոցները (13,1%)

Տեղական վճարները (10,8%)

Գույքի վարձակալությունից եկամուտներ (2,5%)

Տույժերից և տուգանքներից մուտքերը (0,8%)

Բաժնետիրական ընկերությունների
շահաբաժիններ (0,1%)

Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (0,01%)


Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները

Պետական բյուջեից և (կամ) այլ համայնքների
բյուջեներից տրամադրվող բյուջետային
փոխատվությունները


Փոխատվությունների վերադարձից ստացվող միջոցները

Վարչական բյուջեի միջոցների ազատ մնացորդը

ՀՀ համայնքների վարչական բյուջեն 2024թ.



Համայնքի ֆոնդային բյուջեի կառուցվածքը



Համայնքի բյուջեի ծախսերն ըստ վարչական և ֆունդային բյուջենների



**Համայնքի բյուջեի նախագիծն իր մեջ ընդգրկում է՝
համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը և
համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման
նախագիծը**

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար **անհատույց, անվերադարձ և ոչ նպատակային կարգով** տրվող դրամական միջոցներ՝ **ֆինանսական համահարթեցման դոտացիաներ:**

Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգը սահմանվում է **օրենքով:**

Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը:

**ԹԵՄԱ 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ
ՄՇԱԿՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԿԱՐԳԸ**

**Համայնքի բյուջեի նախագծի մշակման
գործընթացը բաղկացած է երկու փուլից՝**

- 1) առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով առաջիկա երեք տարվա՝ ՄԺԾԾ-ի մշակում.
- 2) առաջիկա տարվա համայնքի բյուջեի **նախագծի մշակում:**

Միջնաժամկետ ծախսերի ծրագիր (ՄԺԾԾ)

Պանել 1. Եկամտային մաս (Կանխատեսումներ)

- Ներառում է եկամուտների 3-ամյա կանխատեսում, ռիսկերի գնահատում, նախորդ պլաններից շեղումների վերլուծություն և տնտեսական սպասումների հիմնավորում:


Պանել 2. Ծախսային քաղաքականություն (Նպատակներ)

- Ներառում է ծրագրերի ակնկալվող արդյունքները, ծախսերի վրա ազդող գործոնները (սոցիալ-տնտեսական միտումներ), համայնքի զարգացման առաջնահերթությունները և ակնկալվող արտաքին աջակցությունը:

Փոխգործակցություն. Համայնքի ղեկավարը մշակում է ՄԺԾԾ-ն, անցկացնում բաց լսումներ, իսկ Ավագանին՝ հաստատում այն:

ՀՀ կառավարության կամ նրա կողմից լիազորված պետական կառավարման մարմնի կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ, բացառությամբ ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքներին տրամադրվող այլ նպատակային ծախսերի ֆինանսավորման դեպքերի:

Բյուջետային նախագծի կազմում և հաստատում,
սկսվում է կանխատեսվող տարվան նախորդող տարվա կեսին և
տևում է շուրջ կես տարի



Մինչ Ավագանու կողմից պաշտոնապես քննարկվելը, բյուջեի նախագիծը պետք է անցնի հանրային քննարկման ֆիլտրով:


Քայլ 1. Ձևավորում

Համայնքի ղեկավարի աշխատակազմը հավաքում է հայտերը, հաշվարկում եկամուտներն/ծախսերը և ձևավորում սկզբնական հաշվեկշիռը:



Քայլ 2. Բաց լսումներ

Համայնքի ղեկավարը պարտավոր է բնակիչների հետ կազմակերպել հանրային լսումներ:



Արդյունքները և ընդունված առաջարկությունները փոխանցվում են Ավագանուն:


Քայլ 3. Փոխանցում Ավագանուն

Նախագիծն ուղարկվում է Ավագանու անդամներին նիստում պաշտոնական քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ:



Համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը
ավագանու քննարկմանն է ներկայացնում
ՀՀ կառավարության կողմից ֆինանսական
համահարթեցման սկզբունքով համայնքներին
տրամադրվող դոտացիաների նախնական թվերի
հրապարակումից հետո՝
երկամսյա ժամկետում:


Ավագանու անդամները իրավունք ունեն առաջարկություններ ներկայացնել: Սակայն օրենքը խստորեն պաշտպանում է համայնքի ֆինանսական հավասարակշռությունը:



Ծանոթագրություն. Եթե նախաձեռնությունը պահանջում է նոր ծախսեր, հեղինակը պարտավոր է նշել դրանց ֆինանսավորման աղբյուրը:


Սցենար 1. Հրաժարականի սպառնալիք

Եթե բյուջեն չի ընդունվում, համայնքի ղեկավարը կարող է հրաժարական տալ:



Չարգացում (Ժամկետը 3 օր):

Եթե ավագանին 3 օրվա ընթացքում չի ընդունում հրաժարականը (անհրաժեշտ է ձայների 2/3-ը), բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի փոփոխություններով:



Համայնքի ավագանու կողմից որոշում ընդունվելու դեպքում համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է կառավարության լիազորած մարմին, որն էլ օրենքով սահմանված կարգով այն ներկայացնում է կառավարություն:

Եթե կառավարությունը դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Կառավարության կողմից համայնքի ղեկավարի՝ հրաժարական
տալու միջոցով լիազորությունները վաղաժամկետ
դադարեցնելու դեպքում՝ համայնքի նոր ղեկավարը բյուջեի
նախագիծ է ներկայացնում համայնքի ավագանուն քսան օրվա
ընթացքում: Այն քննարկվում և հաստատվում է օրենքով
նախատեսված կարգով՝ երեսուն օրվա ընթացքում:

Եթե մինչև հունվարի 1-ը բյուջեն հաստատված չէ.



Թույլատրվում է.

Ճախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեին համամասնորեն (ոչ ավելի, քան ամսական 1/12-ը): Հին պայմանագրերի կատարում:



Արգելվում է.


Ցանկացած նոր ներդրումների իրականացում:



Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին և օրենքով սահմանված սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է պետական լիազորված մարմին ներկայացվող՝ մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում:

Ավագանու կողմից բյուջեի հաստատումից հետո կառավարումն անցնում է Գործադիր իշխանությանը և Պետական գանձապետարանին:



Համայնքի բյուջեի հրապարակայնությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ

1. Համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանուն ներկայացնելուց հետո **եռօրյա ժամկետում** հրատարակվում է տեղական մամուլում:

2. Բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին

3. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և <http://www.azdarar.am> կայքում

4. Պայմաններ են ստեղծում, որպեսզի համայնքի բյուջեի նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:

ԹԵՄԱ 4.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն
համայնքի ղեկավարն է:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն
իրականացնում են **համայնքի ավագանին,
Ազգային ժողովը և պետական վերահսկողական
ծառայությունը՝** օրենքով իրենց վերապահված
լիազորությունների շրջանակներում:

Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման
վերահսկողությունն իրականացնում է **իր անդամի**
(անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված
կազմակերպության միջոցով, ավագանու որոշած
պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ
անգամ:

Համայնքների բյուջեների կատարման վերահսկողության հիմնական խնդիրներն են՝

- բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը,
- բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը,
- բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը,
- բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ **վերահսկողության** սահմանումը,
- բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը:



Նախնական վերահսկողություն



Ընթացիկ վերահսկողություն



Ամփոփիչ վերահսկողություն

Նախնական վերահսկողություն

Տեղի է ունենում բյուջեի
նախագծի կազմման,
քննարկման և հաստատման
փուլում:

Ընթացիկ վերահսկողություն

Իրական ժամանակում
կատարողականի գնահատում:
Համայնքի ղեկավարը պարտավոր է
եռամսյակը մեկ (մինչև հաջորդ
եռամսյակի առաջին ամսվա 15-ը)
Ավագանուն հաղորդում ներկայացնել
կատարման ընթացքի մասին:

Ամփոփիչ վերահսկողություն

Տարեկան կատարողական
հաշվետվության կազմում,
գնահատում, աուդիտ և
հաստատում:

Վերահսկողության չափումները. ինչպես ստուգել արդյունավետությունը

Ավագանին իրավունք ունի օգտագործել ուղղակի և անուղղակի վերահսկողության մեթոդներ:
Վերահսկողությունը ընդգրկում է չորս չափումներ:



1. Ֆինանսական և հաշվապահական վերահսկողություն

Արդյոք ծախսերը համապատասխանում են օրենքին: Արդյոք հաշիվները ճիշտ են վարվում:



2. Կառավարչական վերահսկողություն

Արդյոք պահպանվում են գնումների ընթացակարգերը, հաստիքացուցակը, գործուղումների սահմանաչափերը և գույքի գույքագրումը:



3. Ծրագրերի գնահատում

«Ծախսեր-արդյունք» կապի վերլուծություն: Արդյոք գումարները ծախսվել են նպատակներին համապատասխան: Ինչ է իրականում ստացել համայնքը:



4. Արտաքին աուդիտ

Իրավական և ֆինանսական մաքրության անկախ մասնագիտական ստուգում (իրականացվում է մասնագիտացված կազմակերպության կողմից):

ՀԱՆՐԱՅԱԿԱԼ ՈՒԹՅՈՒՆ

